Закрытое акционерное общество
«Газпром Армения»
(ЗАО «Газпром Армения»)

Учреждение «Учебно-спортивный комплекс»

«Գազպրոմ Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկ

ПРИКАЗ
ՀՐԱՄԱՆ

«16» մայիսի 2025թ. № 249-Ա

«ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ (ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ) ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, «ԳԱԶՊՐՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՈՒՍՈՒՄՆԱ-ՍՊՈՐՏԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐ» ՀԻՄՆԱՐԿԻ ՏՆՕՐԵՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի N 489-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N 111-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության կողմից 25.12.2024 թվականին (Ն/70/56360-2024) և 11.03.2025 թվականին (Ն/70/8187-2025) տրված համաձայնությունները, ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով, 37-րդ հոդվածի 1-ին մասով և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի (այսուհետ՝ Հիմնարկ) կանոնադրության 72-րդ կետի 1-ին և 7-րդ ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Սահմանել՝

1) 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում՝ 2025 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2026 թվականի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում, Հիմնարկի մանկապարտեզ (այսուհետ՝ Մանկապարտեզ) ընդունվող սաներին նախադպրոցական ծառայություններ մատուցելու համար կնքվող և 2025 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2026 թվականի հուլիսի 1-ն ուժի մեջ մտնող պայմանագրերով վճարների (վարձավճարների) դրույքաչափերը՝ համաձայն N 1 հավելվածի,

2) 2025-2026 ուսումնական տարվա ընթացքում՝ 2025 թվականի սեպտեմբերի 1-ից 2026 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում, Հիմնարկի հանրակրթական դպրոց (այսուհետ՝ Դպրոց) ընդունվող սովորողներին կրթական (տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական) ծառայություններ մատուցելու համար կնքվող և 2025 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2026 թվականի ապրիլի 1-ն ուժի մեջ մտնող պայմանագրերով վճարների (վարձավճարների) դրույքաչափերը՝ համաձայն N 2 հավելվածի,

3) Հիմնարկի կողմից մատուցվող՝

ա) ամառային դպրոցի կազմակերպման (արտադպրոցական դաստիարակության) ծառայությունների վճարների (վարձավճարների) դրույքաչափերը՝ համաձայն N 3 հավելվածի,

բ) մարզաառողջարարական ծառայությունների վճարների դրույքաչափերը՝ համաձայն N 4 հավելվածի,

գ) այլ ծառայությունների վճարների դրույքաչափերը՝ համաձայն N 5 հավելվածի:

2. Սահմանել, որ Հիմնարկի այն աշխատողները, ովքեր ձևակերպված են Հիմնարկի պաշտոնային ցուցակով առնվազն կես (0.5) դրույքաչափով, հանդիսանում են Հիմնարկի հիմնական աշխատող և ունեն Մանկապարտեզ հաճախող և Դպրոցում սովորող երեխա, սույն հրամանի NN 1 և 2 հավելվածներով սահմանված զեղչերից բացի, օգտվում են նաև՝

1) 20 (քսան) տոկոս զեղչի իրավունքից,

2) 30 (երեսուն) տոկոս զեղչի իրավունքից՝ Մանկապարտեզ հաճախող երեխայի մասով, եթե հանդիսանում են Մանկապարտեզում դաստիարակ,

3) 30 (երեսուն) տոկոս զեղչի իրավունքից, Դպրոցում սովորող երեխայի մասով, եթե հանդիսանում են Դպրոցի դասավանդող (ուսուցիչ) կամ Դպրոցի ուսումնական աշխատանքների պատասխանատու,

4) սույն կետի 1-3-րդ ենթակետերով սահմանված զեղչերից բացի, լրացուցիչ 10 (տասը) տոկոս զեղչի իրավունքից, եթե բավարարում են սույն կետով սահմանված պայմաններին և մինչև 2025 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ ունեն (2025 թվականի սեպտեմբերի 30-ի դրությամբ կունենան) Հիմնարկում 4 (չորս) և ավելի տարվա անընդմեջ (չընդհատվող) աշխատանքային ստաժ:

3. Ընդունել ի գիտություն, որ՝

1) մեկ անձի կողմից սույն հրամանի 2-րդ կետի 1-4-րդ ենթակետերով, ինչպես նաև սույն հրամանի NN 1 և 2 հավելվածներով սահմանված մեկից ավելի զեղչի իրավունք ունենալու դեպքում տվյալ անձն օգտվում է բոլոր զեղչերից միաժամանակ (հանրագումարով),

2) Դպրոցի սովորողներին ուսման վարձավճարի զեղչի և արտոնությունների տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 2021 թվականի հոկտեմբերի 20-ի N 126 հրամանով,

3) սույն հրամանի NN 4 և 5 հավելվածներով նախատեսված ծառայությունների վճարների դրույքաչափերը ներառում են ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ):

4. Հիմնարկի գլխավոր հաշվապահ Ա.Մոմճյանին, Դպրոցի ուսումնական աշխատանքների պատասխանատուներ Մ.Ներսիսյանին, Լ.Գալստյանին, լրացուցիչ կրթության պատասխանատու Թ.Բաղդասարյանին, Մանկապարտեզի դաստիարակչական աշխատանքների պատասխանատու Ա.Խաչատրյանին, սպորտի գծով պատասխանատու-գլխավոր ադմինիստրատոր Մ. Մանգասարովային՝ ապահովել սույն հրամանի կատարման կազմակերպումը:

5. Հիմնարկի տնօրենի՝ ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ Ե.Ամիրխանյանին, ուսումնական աշխատանքների և սպորտի գծով տեղակալ Է.Սանթրոսյանին, վարչական և տնտեսական հարցերով տեղակալ Զ.Առաքելյանին, կորպորատիվ պաշտպանության գծով տեղակալ Գ.Մխիթարյանին՝ ապահովել սույն հրամանի նկատմամբ հսկողությունը:

6. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հիմնարկի տնօրենի 2023 թվականի հունիսի 30-ի N 489-Ա հրամանը,

2) Հիմնարկի տնօրենի 2024 թվականի փետրվարի 19-ի N 111-Ա հրամանով հաստատված՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի հանրակրթական դպրոցի ընդունելության կարգի 8-րդ կետը:

7. Սույն հրամանի N 2 հավելվածի դրույթների, ինչպես նաև դրանց հետ փոխկապակցված՝ սույն հրամանով սահմանված զեղչերի կիրառման վերաբերյալ դրույթների գործողությունը տարածվում է մինչև սույն հրամանի ընդունումը՝ սույն հրամանի N 2 հավելվածով սահմանված ծառայությունների մատուցման վերաբերյալ կնքված պայմանագրերի նկատմամբ:

8. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, բացառությամբ սույն հրամանի 1-ին կետի 1-ին և 2-րդ ենթակատերի ու 6-րդ կետի 1-ին ենթակետի, որոնք ուժի մեջ են մտնում 2025 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՏՆՕՐԵՆ Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

«ՈՒՍԳ» ՅԻՄՆԱՐԿ «УСК» УЧРЕЖДЕНИЕ «ESC» ENTERPRISE 00046317

Հավելված N 1
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի
2025 թվականի մայիսի « 16 » ի N 249-Ա հրամանի

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ (2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ը) ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ԸՆԴՈՒՆՎՈՂ ՍԱՆԵՐԻՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿՆՔՎՈՂ ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ն ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ՎՃԱՐՆԵՐԻ (ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ)

1. Ժամը 8.30-ից մինչև 18.30-ն, շաբաթական 5 օրվա (երկուշաբթի-ուրբաթ) ընթացքում մատուցվող նախադպրոցական ծառայությունների համար, ամսական՝ 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Ժամը 8.30-ից մինչև 13.30-ն, շաբաթական 5 օրվա (երկուշաբթի-ուրբաթ) ընթացքում մատուցվող նախադպրոցական ծառայությունների համար, ամսական՝ 140,000 (մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ:

3. Մեկ ընտանիքից Մանկապարտեզ կամ Դպրոց հաճախող երկրորդ երեխայի համար կիրառվում է զեղչ՝ սույն հավելվածի 1-ին կետով սահմանված վճարների դրույքաչափերի նկատմամբ՝ 10 (տասը) տոկոսի չափով: Երկրորդ երեխայից (սանից) հետո յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար կիրառվում է նախորդից ավել ևս 10 (տասը) տոկոսի չափով զեղչ:

4. Սույն հավելվածով սահմանված նախադպրոցական ծառայությունների վճարները (վարձավճարները) գործում են նախադպրոցական ծառայությունների մատուցման պայմանագրի գործողության ընթացքում (անընդմեջ՝ առանց պայմանագրի ընդհատման) և մինչև Մանկապարտեզի ավագ խմբում սանի ուսուցման և զարգացման կազմակերպման ավարտը ենթակա չեն փոփոխման:

Հավելված N 2
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի
2025 թվականի մայիսի « 16 » ի N 249-Ա հրամանի

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
2025-2026 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ (2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ը) ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴՊՐՈՑ ԸՆԴՈՒՆՎՈՂ (ՏԵՂԱՓՈԽՎՈՂ) ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ԿՐԹԱԿԱՆ (ՏԱՐՐԱԿԱՆ, ՀԻՄՆԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿՆՔՎՈՂ ԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-Ն ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՎ ՎՃԱՐՆԵՐԻ (ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ)

1. 2,250,000 (երկու միլիոն երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ մեկ ուսումնական տարվա համար, այդ թվում՝ այլ ուսումնական հաստատությունից Դպրոց կամ Դպրոցի սովորողի՝ Դպրոցի հաջորդ կրթական աստիճան՝ տարրական դպրոցից (1-4-րդ դասարաններ) միջին (հիմնական) դպրոց (5-9-րդ դասարաններ) կամ միջին (հիմնական) դպրոցից ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ) տեղափոխվելու եղանակով:

2. Կրթական ծառայությունները Հիմնարկի տնօրենի հրամանով հեռավար (դիստանցիոն) եղանակով մատուցելիս՝ կրթական ծառայությունների մատուցման վերաբերյալ կնքված պայմանագրի գնի նկատմամբ կիրառվում է 20 (քսան) տոկոս զեղչ:

3. Մեկ ընտանիքից Դպրոց կամ Մանկապարտեզ հաճախող երկրորդ երեխայի համար կիրառվում է զեղչ՝ մեկ ուսումնական տարվա վճարի դրույքաչափի նկատմամբ 10 (տասը) տոկոսի չափով: Երկրորդ երեխայից (սովորողից) հետո յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար կիրառվում է նախորդից ավել ևս 10 (տասը) տոկոսի չափով զեղչ:

4. Սույն հավելվածի 1-ին կետով սահմանված կրթական ծառայությունների վճարների դրույքաչափերը գործում են սովորողի կողմից անընդմեջ (առանց կրթական ծառայությունների մատուցման մասին պայմանագրի ընդհատման), ըստ Դպրոցի համապատասխան կրթական աստիճանի՝ տարրական դպրոցում (1-4-րդ դասարաններ), հիմնական (միջին) դպրոցում (5-9-րդ դասարաններ) կամ ավագ դպրոցում (10-12-րդ դասարաններ), ուսումնառության ավարտը և այդ ընթացքում ենթակա չեն փոփոխման:

Հավելված N 3
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի
2025 թվականի մայիսի « 16 » ի N 249-Ա հրամանի

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՄԱՌԱՅԻՆ ԴՊՐՈՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ (ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հիմնարկում ամառային դպրոցի կազմակերպում (արտադպրոցական դաստիարակություն)՝

1) «Ամառային կրթական հավաք», 4 շաբաթ տևողությամբ՝ 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,

2) «GAUS-2025 Նորարական SS ամառային ճամբար», 3 շաբաթ տևողությամբ՝ 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

2. Դպրոցի սովորողների և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ աշխատողների, այդ թվում՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ մասնաճյուղերի, դուստր ընկերությունների և այլ կազմակերպությունների, բացառությամբ՝ Հիմնարկի աշխատողների երեխաների համար, սույն հավելվածի 1-ին կետով նախատեսված ծառայությունների համար կիրառվում է 10 (տասը) տոկոս զեղչ:

3. Հիմնարկի աշխատողների երեխաների համար սույն հավելվածի 1-ին կետով նախատեսված ծառայությունների համար կիրառվում է 50 (հիսուն) տոկոս զեղչ:

4. Մեկ ընտանիքից Հիմնարկի ամառային դպրոց հաճախող երկրորդ երեխայի համար կիրառվում է զեղչ՝ սույն հավելվածի 1-ին կետով նախատեսված վճարի դրույքաչափի նկատմամբ 10 (տասը) տոկոսի չափով: Երկրորդ երեխայից հետո յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար կիրառվում է նախորդից ավել ևս 10 (տասը) տոկոսի չափով զեղչ:

5. Մեկ անձի կողմից սույն հավելվածով սահմանված մեկից ավելի զեղչի իրավունք ունենալու դեպքում տվյալ անձն օգտվում է բոլոր զեղչերից միաժամանակ (հանրագումարով):

Հավելված N 4
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի
2025 թվականի մայիսի « 16 » ի N 249-Ա հրամանի

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ՄԱՐԶԱԱՌՈՂՋԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Մարզասարքերի դահլիճում մարզվելու համար (յուրաքանչյուր անձը)՝

1) մեկանգամյա այցելություն՝ 2000 (երկու հազար) ՀՀ դրամ,

2) մեկանգամյա այցելություն (մարզումը մարզիչի հետ)՝ 3000 (երեք հազար) ՀՀ դրամ,

3) 1 ամսվա ընթացքում 8 այցելություն՝ 12000 (տասներկու հազար) ՀՀ դրամ,

4) 1 ամսվա ընթացքում 8 այցելություն (մարզումը մարզիչի հետ)՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,

5) 1 ամսվա ընթացքում 12 այցելություն՝ 18000 (տասնութ հազար) ՀՀ դրամ,

6) 1 ամսվա ընթացքում 12 այցելություն (մարզումը մարզիչի հետ)՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ,

7) 1 ամսվա ընթացքում անսահմանափակ այցելություն՝ 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ,

8) 1 ամսվա ընթացքում անսահմանափակ այցելություն (մարզումը մարզիչի հետ)՝ 45000 (քառասունհինգ հազար) ՀՀ դրամ:

2. Խաղային ձևերի համար նախատեսված մեծ մարզադահլիճից օգտվելու համար՝

1) սպորտային (մարզական) խաղերի, մարզումների (պարապմունքների) մեկանգամյա անցկացում, առանց համապատասխան ձայնային ապահովման (յուրաքանչյուր ժամը)՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ,

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված խաղերի անցկացում՝ առանց համապատասխան ձայնային ապահովման, առավելագույնը 1 (մեկ) տարվա ընթացքում, ընդհանուր ոչ պակաս, քան 24 (քսանչորս) ժամ տևողությամբ (յուրաքանչյուր ժամը)՝ 27000 (քսանյոթ հազար) ՀՀ դրամ,

3) սպորտային (մարզական) մրցաշարերի, առաջնությունների, մրցույթների, ուսումնամարզական հավաքների, ունիվերսիադաների, կորպորատիվ և (կամ) այլ մասսայական (հանրային) միջոցառումների, այդ թվում՝ տոնակատարությունների, մշակութային միջոցառումների անցկացման նպատակով, ներառյալ՝ մարզումների (պարապմունքների), փորձերի և (կամ) նախապատրաստական աշխատանքների ժամանակահատվածը, առանց համապատասխան ձայնային ապահովման (յուրաքանչյուր ժամը)՝ 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ, սակայն մեկ օրվա ընթացքում ոչ պակաս, քան 4 (չորս) ժամ՝ 120,000 (մեկ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, իսկ մեկ ամբողջ օրվա (ժամը՝ 9:00-ից 24:00-ն) համար՝ 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ, բացառությամբ՝ սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված դեպքերի,

4) հանրապետական և (կամ) միջազգային բնույթի սպորտային (մարզական) մրցաշարերի, առաջնությունների, մրցույթների, ուսումնամարզական հավաքների, ունիվերսիադաների, կորպորատիվ և (կամ) այլ մասսայական (հանրային) միջոցառումների, այդ թվում՝ տոնակատարությունների, մշակութային միջոցառումների անցկացման

նպատակով, ներառյալ՝ մարզումների (պարապմունքների), փորձերի և (կամ) նախապատրաստական աշխատանքների ժամանակահատվածը, առանց համապատասխան ձայնային ապահովման (յուրաքանչյուր ժամը)՝ 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ, սակայն մեկ օրվա ընթացքում ոչ պակաս, քան 5 (հինգ) ժամ՝ 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ մեկ ամբողջ օրվա (ժամը՝ 9:00-ից 24:00-ն) համար՝ 600,000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ,

5) սույն կետում նշված միջոցառումների ընթացքում մարզասարքերի դահլիճից մեկ ամբողջ օրվա (ժամը՝ 9:00-ից 24:00-ն) ընթացքում օգտվելու համար՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

3. Խաղային ձևերի համար նախատեսված փոքր մարզադահլիճից օգտվելու համար՝

1) սպորտային (մարզական) խաղերի, մարզումների (պարապմունքների) մեկանգամյա անցկացում՝ 1 (մեկ) ժամը՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ,

2) սպորտային (մարզական) մրցաշարերի, առաջնությունների, մրցույթների, ուսումնամարզական հավաքների, ունիվերսիադաների, կորպորատիվ և (կամ) այլ մասսայական (հանրային) միջոցառումների, այդ թվում՝ տոնակատարությունների, մշակութային միջոցառումների անցկացման նպատակով, ներառյալ՝ մարզումների (պարապմունքների), փորձերի և (կամ) նախապատրաստական աշխատանքների ժամանակահատվածը (յուրաքանչյուր ժամը)՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ, սակայն մեկ օրվա ընթացքում ոչ պակաս, քան 4 (չորս) ժամ՝ 60,000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ, իսկ մեկ ամբողջ օրվա (ժամը՝ 9:00-ից 24:00-ն) համար՝ 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, բացառությամբ՝ սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքերի,

3) հանրապետական և (կամ) միջազգային բնույթի սպորտային (մարզական) մրցաշարերի, առաջնությունների, մրցույթների, ուսումնամարզական հավաքների, ունիվերսիադաների, կորպորատիվ և (կամ) այլ մասսայական (հանրային) միջոցառումների, այդ թվում՝ տոնակատարությունների, մշակութային միջոցառումների անցկացման նպատակով, ներառյալ՝ մարզումների (պարապմունքների), փորձերի և (կամ) նախապատրաստական աշխատանքների ժամանակահատվածը (յուրաքանչյուր ժամը)՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ, սակայն մեկ օրվա ընթացքում ոչ պակաս, քան 5 (հինգ) ժամ՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ մեկ ամբողջ օրվա (ժամը՝ 9:00-ից 24:00-ն) համար՝ 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

4. 3-ից մինչև 5 տարեկանը ներառյալ երեխաների համար նախատեսված՝ Մանկապարտեզի լողավազանում մարզիչի հետ խմբակային մարզվելու համար, 30 րոպե տևողությամբ մարզումներ (յուրաքանչյուր անձը)՝

1) 5 շաբաթվա ընթացքում 8 այցելություն՝ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ,
2) 5 շաբաթվա ընթացքում 12 այցելություն՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ:

5. 6-ից մինչև 16 տարեկանը ներառյալ երեխաների համար նախատեսված՝ Դպրոցի լողավազանում մարզիչի հետ խմբակային մարզվելու համար, 45 րոպե տևողությամբ մարզումներ (յուրաքանչյուր անձը)՝

1) 5 շաբաթվա ընթացքում 8 այցելություն՝ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
2) 5 շաբաթվա ընթացքում 12 այցելություն՝ 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ:

6. 6-ից մինչև 16 տարեկանը ներառյալ երեխաների համար նախատեսված՝ Դպրոցի լողավազանում մարզիչի հետ անհատական մարզվելու համար 45 րոպե տևողությամբ մարզումներ (յուրաքանչյուր անձը)՝

1) մեկանգամյա այցելություն՝ 8000 (ութ հազար) << դրամ,

2) 2 շաբաթվա ընթացքում 4 այցելություն՝ 30000 (երեսուն հազար) << դրամ,

3) 5 շաբաթվա ընթացքում 8 այցելություն՝ 50000 (հիսուն հազար) << դրամ,

4) 5 շաբաթվա ընթացքում 12 այցելություն՝ 70000 (յոթանասուն հազար) << դրամ:

7. Փակ սահադաշտում մարզվելու (գեղասահք) համար (յուրաքանչյուր անձը)՝

1) մեկանգամյա այցելություն (մարզումը անհատական մարզիչի հետ), 45 րոպե տևողությամբ մարզում սահադաշտում, ներառյալ չմուշկների տրամադրումը՝ 10000 (տասը հազար) << դրամ,

2) 1 ամսվա ընթացքում 10 այցելություն (մարզումը անհատական մարզիչի հետ), 45 րոպե տևողությամբ մարզում սահադաշտում, ներառյալ չմուշկների տրամադրումը՝ 80000 (ութսուն հազար) << դրամ,

3) մասսայական սահք, ներառյալ չմուշկների տրամադրումը (յուրաքանչյուր ժամը)՝ 3000 (երեք հազար) << դրամ,

4) չմուշկներով սահելու համար հենակների տրամադրում (յուրաքանչյուր ժամը)՝ 1000 (մեկ հազար) << դրամ,

5) չմուշկների տրամադրում՝ 1000 (մեկ հազար) << դրամ:

8. Փակ սահադաշտից օգտվելու համար՝

1) սառույցի շերտի բացակայության ժամանակահատվածում սպորտային (մարզական) խաղերի, մարզումների (պարապմունքների) մեկանգամյա անցկացում՝ առանց համապատասխան լուսային և ձայնային ապահովման (յուրաքանչյուր ժամը)՝ 30000 (երեսուն հազար) << դրամ,

2) սառույցի շերտի բացակայության ժամանակահատվածում սպորտային (մարզական) մրցաշարերի, առաջնությունների, մրցույթների, ուսումնամարզական հավաքների, ունիվերսիադաների, կորպորատիվ և (կամ) այլ մասսայական (հանրային) միջոցառումների, այդ թվում՝ տոնակատարությունների, մշակութային միջոցառումների անցկացման նպատակով, ներառյալ մարզումների (պարապմունքների), փորձերի և (կամ) նախապատրաստական աշխատանքների ժամանակահատվածը, առանց համապատասխան լուսային և ձայնային ապահովման (յուրաքանչյուր ժամը)՝ 30000 (երեսուն հազար) << դրամ, սակայն մեկ օրվա ընթացքում ոչ պակաս, քան 4 (չորս) ժամ՝ 120,000 (մեկ հարյուր քսան հազար) << դրամ, իսկ մեկ ամբողջ օրվա (ժամը՝ 9:00-ից 24:00-ն) համար՝ 400,000 (չորս հարյուր հազար) << դրամ, բացառությամբ սույն կետի 3-րդ ենթակետով նախատեսված դեպքերի,

3) սառույցի շերտի բացակայության ժամանակահատվածում հանրապետական և (կամ) միջազգային բնույթի սպորտային (մարզական) մրցաշարերի, առաջնությունների, մրցույթների, ուսումնամարզական հավաքների, ունիվերսիադաների, կորպորատիվ և (կամ) այլ մասսայական (հանրային) միջոցառումների, այդ թվում՝ տոնակատարությունների, մշակութային միջոցառումների անցկացման նպատակով, ներառյալ մարզումների (պարապմունքների), փորձերի և (կամ) նախապատրաստական աշխատանքների ժամանակահատվածը, առանց համապատասխան լուսային և ձայնային ապահովման (յուրաքանչյուր ժամը)՝ 40000 (քառասուն հազար) << դրամ, սակայն մեկ օրվա ընթացքում

ոչ պակաս, քան 5 (հինգ) ժամ՝ 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, իսկ մեկ ամբողջ օրվա (ժամը՝ 9:00-ից 24:00-ն) համար՝ 600,000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ,

4) սառույցի շերտի առկայությամբ սպորտային (մարզական) խաղերի, մարզումների (պարապմունքների) մեկանգամյա անցկացում՝ առանց համապատասխան լուսային և ձայնային ապահովման (յուրաքանչյուր ժամը)՝ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ,

5) սառույցի շերտի առկայությամբ սպորտային (մարզական) մրցաշարերի, առաջնությունների, մրցույթների, ուսումնամարզական հավաքների, ունիվերսիադաների, կորպորատիվ (կամ) այլ մասսայական (հանրային) միջոցառումների, այդ թվում՝ տոնակատարությունների, մշակութային միջոցառումների, ներառյալ՝ հանրապետական և (կամ) միջազգային բնույթի, անցկացման նպատակով, ներառյալ՝ մարզումների (պարապմունքների), փորձերի և նախապատրաստական աշխատանքների ժամանակահատվածը, առանց համապատասխան լուսային և ձայնային ապահովման (յուրաքանչյուր ժամը)՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ,

6) համապատասխան լուսային ապահովման դեպքում (լուսային էֆեկտներ)՝ լրացուցիչ 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ, բայց ոչ ավել, քան մեկ օրվա ընթացքում 150,000 (մեկ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ,

7) համապատասխան ձայնային ապահովման դեպքում, այդ թվում՝ խաղային ձևերի համար նախատեսված մեծ և (կամ) փոքր մարզադահլիճից օգտվելիս՝

ա) լրացուցիչ 10000 (տասը հազար) ՀՀ դրամ՝ 1 բարձրախոսով, բայց ոչ ավել, քան մեկ օրվա ընթացքում 30000 (երեսուն հազար) ՀՀ դրամ,

բ) լրացուցիչ 15000 (տասնհինգ հազար) ՀՀ դրամ՝ 2 բարձրախոսով, բայց ոչ ավել, քան մեկ օրվա ընթացքում 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ,

գ) լրացուցիչ 20000 (քսան հազար) ՀՀ դրամ՝ 3 բարձրախոսով, բայց ոչ ավել, քան մեկ օրվա ընթացքում 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ,

դ) լրացուցիչ 25000 (քսանհինգ հազար) ՀՀ դրամ՝ 4-6 բարձրախոսով, բայց ոչ ավել, քան մեկ օրվա ընթացքում 60000 (վաթսուն հազար) ՀՀ դրամ:

9. Սույն հավելվածում նշված ծառայությունների համար գործում են հետևյալ զեղչերը.

1) Դպրոցի սովորողների և Մանկապարտեզի սաների համար՝ 10 (տասը) տոկոս զեղչ՝ բոլոր ծառայությունների մասով, բացառությամբ սույն հավելվածի 2-րդ, 3-րդ, 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված ծառայությունների,

2) Դպրոցի սովորողների և Մանկապարտեզի սաների ծնողների համար՝ 10 (տասը) տոկոս զեղչ՝ սույն հավելվածի 1-ին կետով նախատեսված ծառայությունների մասով,

3) մեկ ընտանիքից երկու կամ ավելի անդամների համար՝ ծառայություններից օգտնվող ընտանիքի երկրորդ անդամի համար՝ 10 (տասը) տոկոս, իսկ ընտանիքի երկրորդ անդամից հետո յուրաքանչյուր հաջորդ անդամի համար՝ նախորդից ավել ևս 10 (տասը) տոկոս զեղչ՝ բոլոր ծառայությունների մասով, բացառությամբ սույն հավելվածի 2-րդ, 3-րդ 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված ծառայությունների,

4) մեկ անձի կողմից երկու կամ ավել ծառայություններից օգտվելու դեպքում յուրաքանչյուր հաջորդ ծառայության համար՝ 10 (տասը) տոկոս՝ բոլոր ծառայությունների մասով, բացառությամբ սույն հավելվածի 2-րդ, 3-րդ 7-րդ և 8-րդ կետերով նախատեսված ծառայությունների,

10. Մեկ անձի կողմից սույն հավելվածով սահմանված մեկից ավելի զեղչի իրավունք ունենալու դեպքում տվյալ անձն օգտվում է բոլոր զեղչերից միաժամանակ (հանրագումարով):

Հավելված N 5
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի տնօրենի
2025 թվականի մայիսի « 16 » ի N 249-Ա հրամանի

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԻՄՆԱՐԿԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Դպրոցի մասնաշենքում գտնվող կոնֆերանս դահլիճից՝ իր համապատասխան լուսային և ձայնային սարքավորումներով, օգտվելու համար՝

1) 2 ժամը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ,
2) 4 ժամը՝ 180,000 (մեկ հարյուր ութսուն հազար) ՀՀ դրամ,
3) 6 ժամը՝ 240,000 (երկու հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ,
4) 8 ժամը՝ 300,000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Դպրոցի մասնաշենքում գտնվող պարային ձևերի դահլիճից օգտվելու համար՝ յուրաքանչյուր ժամը՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

3. Հիմնարկի փակ սահադաշտի մասնաշենքում գտնվող՝ խորեոգրաֆիայի համար նախատեսված դահլիճից օգտվելու համար՝ յուրաքանչյուր ժամը՝ 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

4. Հիմնարկի փակ սահադաշտի եզրային փեղկերի (0.92մ բարձրությամբ) վրա, յուրաքանչյուր 1 (մեկ) օրը գովազդ տեղադրելու համար՝ 1 (մեկ) գծամետրը (1.0մ x 0.92մ չափսերով)՝ 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ, բայց ոչ պակաս, քան 5000 (հինգ հազար) ՀՀ դրամը:

5. Հիմնարկի խաղային ձևերի համար նախատեսված մեծ և փոքր մարզադահլիճներում յուրաքանչյուր 1 (մեկ) օրը գովազդ տեղադրելու համար՝ 1 (մեկ) քմ-ը՝ 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ, բայց ոչ պակաս, քան 5000 (հինգ հազար) ՀՀ դրամը:

6. Դպրոց ընդունելության համար անհրաժեշտ հոգեբանական պատրաստվածության հետազոտություն-հարցազրույցի և գիտելիքների գրավոր ստուգման իրականացման, ինչպես նաև ընդունելության փաթեթը կազմելու համար՝ 10000 (տասը հազար) ՀՀ դրամ:

Հիմնարկի տնօրենի հրամանով սահմանված՝ Դպրոց ընդունելության ժամանակ առաջնահերթությունից օգտվող սովորողների ծնողների համար սույն կետում նշված վճարը սահմանվում է 5000 (հինգ հազար) ՀՀ դրամ:

Անկախ հետազոտություն-հարցազրույցի կամ ստուգման արդյունքից, սույն կետում նշված վճարը վերադարձման ենթակա չէ: